## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2021 թվականի N 625-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող «ՎԻ-ԱՐ-ԲԻ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 22072013-06-0017, տրված՝ 22 . 07 . 2013-ին) ՀՀ Լոռու մարզ, համայնք Կաթնառատ, Ձորագետ ՓՀԷԿ-ի շենք հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Կաթնառատ, 5-րդ փողոց, թիվ 3 ՀԷԿ (փոստային դասիչ՝ 2108) հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. նոյեմբերի 15
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2021 թվականի N 626-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը`

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող «ՀԱԶԱՐ ՈՒ ՄԵԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 12022013-06-0254, տրված՝ 12 . 02 . 2013-ին) ՀՀ Լոռու մարզ, համայնք Կաթնառատ, ՀԷԿ-ի շենք հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Կաթնառատ, 5-րդ փողոց, թիվ 2 ՀԷԿ (փոստային դասիչ՝ 2108) հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. նոյեմբերի 15
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2021 թվականի N 627-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող «ՎԱՆՇԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 08022012-06-0022, տրված՝ 8.02.2012-ին) ՀՀ Լոռու մարզ, Կաթնառատ համայնք, փոքր ՀԷԿ հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Կաթնառատ, 5-րդ փողոց, թիվ 1 ՀԷԿ (փոստային դասիչ՝ 2108) հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. նոյեմբերի 15
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2021 թվականի N 628-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐԹՈՒՐ ԱՆՏՈՆՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Արթուր Անտոնյան»-ի 2021 թվականի նոյեմբերի 10-ի N89 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշումով հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ.Նովոսելցովո, 2-րդ փողոց, տուն 53 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Արթուր Անտոնյանի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի չորրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. նոյեմբերի 15
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2021 թվականի N 629-Ա

## ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Տաշիր համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N11-Ն որոշումով հաստաված կարգը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ՝ 2021 թվականի նոյեմբերի 18-ից դեկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում:

2. Համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայք էջում տեղադրել հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների իրավեր, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի, ինչպես նաև վարչական ղեկավարների նստավայրերում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

3. Հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների օր նշանակել 2022 թվականի դեկտեմբերի 2-ը:

4. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների վարման համար համայնքի ղեկավարի ներկայացուցիչ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Նունե Սոլոյանին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 15
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

17 նոյեմբերի 2021 թվականի N 630-Ա

## ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, Վ.ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 122/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 33-րդ և 34-րդ կետերը, 35-րդ կետի բ) ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի 9 դեկտեմբերի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով, 50-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, «Արտյոմ Սաքանյան»ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, հաշվի առնելով այն, որ Տաշիր քաղաքի 06-008-0209-0044 կադաստրային ծածկագրով 0,00480 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լոռու մարզի Տաշիր համայնքին պատկանող 06-008-0209-0044 ծածկագրով 0,00480հա հողամասի վրա քաղաքացի Հակոբ Վանոյի Շահբազյանի կողմից ինքնակամ կառուցված 41քմ մակերեսով խանութի նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող 41քմ մակերեսով խանութը համարել օրինական՝ համաձայն ներկայացվող շինությունների հատակագծի և բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են «Արտյոմ Սաքանյան»ԱՁ-ի կողմից կազմված և Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Հակոբ Վանոյի Շահբազյանին առաջարկել, օրինականացված կառույցը և կից հողամասը պետական գրանցում ստանալուց հետո, ուղղակի վաճառքի կարգով գնել գործող տուրքի և հողամասի կադաստրային արժեքի չափով՝

1) Հողամասի համար՝ 38016 (երեսունութ հազար տասնվեց) դրամ,
2) Խանութ՝ 379332 (երեք հարյուր յոթանասունինը հազար երեք հարյուր երեսուներկու) դրամ:

5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Վ.Սարգսյան փողոց, թիվ 122/1 խանութ (փոստային դասիչ՝ 2101):

6. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. նոյեմբերի 17

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2021 թվականի N 631-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող «ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 30062021-06-0039, տրված՝ 30.06.2021-ին) ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր, գյուղ Բլագոդարնոյե հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե, 1-ին փողոց, թիվ 2/4 հողամաս (փոստային դասիչ՝ 2105) հասցեն

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 17
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2021 թվականի N 632-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ( ԾԱԾԿԱԳԻՐ՝ 2.3-7) ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի N362-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին » N2087-Ա հրամանը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Հաստատել Տաշիրի համյնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (2.3-7) պաշտոնի անձնագիրը՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 17
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 նոյեմբերի 2021 թվականի N 633-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐՄԵՆՈՒՀԻ ՌԱՖԱՅԵԼՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Արմենուհի Ռաֆայելյան»-ի 2021 թվականի հուլիսի 9-ի N65 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45 -րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 200 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Արմենուհի Ռաֆայելյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի չորրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 17
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2021 թվականի N 634-Ա

## ԱԶԱՏ ՍՄԲԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Ազատ Սմբատի Սարգսյանի դիմումը (մուտք՝ 16.11.2021-ի ՄՀ-131-21)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1 .Ազատ Սմբատի Սարգսյանին տալ բնակելի տան կցակառույցի կառուցման նախագծման թույլտվություն:

2. Ազատ Սմբատի Սարգսյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 19
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2021 թվականի N 635-Ա

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Սլավիկ Հայկազի Անախասյանին սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ 1608514 տրված՝ 31.08.2005-ին) Լոռու մարզ, համայնք Տաշիր,քաղաք Տաշիր, Լենինի փողոց, մասնաշենք 3, բնակարան 2, անհատական բնակարան հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Կ. Դեմիրճյան փողոց, բ/շ 3, թիվ 2 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2101) հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 19
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2021 թվականի N 636-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Հռիփ Բենոյի,Միքայել Գրիգորի,Մարետա Պետրոսի,Լեոնուհի Միքայելի,Սրբուհի Միքայելի Պոպոյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական N1768644 տրված 16 . 06 . 2003) հրաժարվելու մասին դիմումը (մուտք՝ 09.11.2021-ի ՄԴ-542-21)

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. Քաղաքացիներ Հռիփ Բենոյի,Միքայել Գրիգորի,Մարետա Պետրոսի,Լեոնուհի Միքայելի,Սրբուհի Միքայելի Պոպոյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.
1) 06-039-0162-0129 կադաստրային ծածկագրով 0,25 հա վարելահող:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Տաշիր սպասարկման գրասենյակ:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականները ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 19
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2021 թվականի N 637-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Հռիփ Բենոյի,Միքայել Գրիգորի,Մարետա Պետրոսի,Լեոնուհի Միքայելի,Սրբուհի Միքայելի Պողոյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական N1768647 տրված 16 . 06 . 2003) հրաժարվելու մասին դիմումը (մուտք՝ 09.11.2021-ի ՄԴ-542-21)

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. Քաղաքացիներ Հռիփ Բենոյի,Միքայել Գրիգորի,Մարետա Պետրոսի,Լեոնուհի Միքայելի,Սրբուհի Միքայելի Պողոյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.
1) 06-039-0143-0015 կադաստրային ծածկագրով 0,143 հա վարելահող:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Տաշիր սպասարկման գրասենյակ:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականները ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 19
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2021 թվականի N 638-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N529-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայատանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 15-ի «Հայստանի Հանրապետության Լոռու մարզ, Տաշիր համայնք գյուղ Կաթնառատ հասցեում գտնվող «Վի-Ար-Բի Կոնցեռն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնկամ կառույցը օրինականացնելու մասին» N 529-Ա որոշման նախաբանում «22072013-06-0017» թվերը փոխարինել «12022013-06-0255» թվերով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 19
ք.Տաշիր